

Տարեկան գինն է 10 ռուբլի:
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.:
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ:

Խմբագրատունը ընդ է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերից
առաւօտեան 11—2 ժամը կ'ընթաց յետ:

Օտարաքաղաքացիք զիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցեով. — En red. vazeta «Meyr Asiatikani», es Tiflis, կամ Redaction de «Meghou Haïastani», à Tiflis. (Caucase).



Խմբագրութեան ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է պարզ դրուած լինին զրոյի ստորագրութեամբ եւ հասցեով: Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները: Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցարհանջ:

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ. Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով: Յայտարարութիւններ ընդունվում են խմբագրատանը, «Արմէնիա» հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում եւ պ. Շահվերդեանի պալիտոմում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Կաթողիկոսական խնդիր
Ներքին Տեսչութիւն. — Թող
թակցութիւններ վաղաքապատից, Կ.
Պօլսոյ եւ Կարսից:
Քաղաքական
Քաղաքական
Մանր լուրեր:
Յայտարարութիւններ:
Բանասիրական. — Եթիմ Լուսը
ցի:

ԹԻՖԼԻՍ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1884 թ.

Մենք քանիցս խոստացանք յայտնելու մեր համետ կարծիքը թէ առաջինայ կաթողիկոսական ընտրութեանց ժամանակ մեր տաճկահայ եղբարք, մանաւանդ Կ. Պօլսի ազգային ժողովն ինչ զերք պէտք է բռնեն: Հաւանական է որ շուտով Ս. Սինոդը կրկին կարգադրութիւն կ'անէ նոր ընտրութեան մասին եւ յայտնի է թէ ինչ կը լինի այս կարգադրութիւնը:

Այսպիսի գէպքում մեր տաճկահայ եղբարք վերայ պարտք կայ ամենամեծ խոհմտութիւնը գործ դնելու որպէս զի ազգի երկու մեծ մասերի մէջ միութեան կապը չը խզվի: Մենք կարծում ենք որ մեր տաճկահայ եղբարք աւելի նախանձախնդիր են ո. Եթիմաճեան ընդհանրական կաթողիկոսի Աթոռի նշանա-

կութեան զօրանալուն: Բայց այս հնարաւոր է լոկ ազգի դէպի Աթոռացոյց տուած սիրով եւ անխնայ կապերով: Այս մի քաղաքական եւ արհեստական միջոց չէ կարող Աթոռի նշանակութիւնը զօրացնել այնքան որքան ընդհանուր ազգի ցոյց տուած կրօնական եռանդն ու համակրութիւնը դէպի նա. աթոռը միայն իւր բարոյական կրօնական նշանակութեամբ է զօրեղ եւ նորա նշանակութիւնը զօրա մէջն է: Այս համադրանքն աչքի առաջ ունենալով մեր տաճկահայ եղբարք կը մնայ ամենայն զօհողութեամբ պինդ պահպանել իրանց կապը սուրբ Աթոռի հետ:

Այս մասին առաջինայ ընտրութեանց ժամանակ նոքա երկու միջոց ունին: Նախ համաձայն Ս. Սինոդի կարգադրութեան եւ Հայաստանի նկայց եկեղեցւոյ սովորութեան թո՛ղ նոքա բարեհաճ իւրաքանչիւր վիճակից ուղարկելու առանձին պատգամաւորներ որ մեծ նշանակութիւն կը տայ աթոռին: Եւ սորա կապը ազգի ընդհանրութեան հետ կը զօրացնէ: Բարոյապէս մօտեցնելով հայ ազգն իւր աթոռին եւ անխնայ կարգադրութիւն երկուսի մէջ հաստատելով, միջոցն մինչեւ ցայժմ նոքա իրար հետ միջնորդով յարաբերութիւն ունեցած են: Գիտենք պիտի առարկեն թէ հապա Կ. Պօլ-

սոյ ազգային ժողովի նշանակութիւնը:

Մենք կարծում ենք որ Կ. Պօլսոյ ազգային ժողովն իրեւ վերջական կենդրոն տաճկահայոց զբաղմով առանձին կորուստ չի ունենալ, պահպանելով իւր բոլոր վարչական իրաւունքները: Ինչ կը կոչեն Կ. Պօլսոյ ազգային ժողովն ու Եթիմաճեան Աթոռի բարոյական սովորութեան զօրանալով եւ ազգի միութեան կապի զօրանալով— ոչինչ: Քանի որ այդ ազգացութեան ուղղութիւնը կախված պիտի լինի հայրապետից որոյ ընտրութիւնն էլի զիմաւորապէս Կ. Պօլսոյ ազգային ժողովից կախումն պիտի ունենայ: Քանի որ տաճկահայոց այդ կենդրոնական վարչութիւնն ունի ոյժ եւ միջոց իրեն ծանօթ անձինք պատգամաւորներ ընտրել տալու իւր վիճակներից: Գէթ մեծ մասամբ:

Մեր կարծիքով Կ. Պօլսոյ ազգային ժողովը երկրորդ արդիւնաւոր ձանապարհը նոր ընտրութեան ժամանակ, պէտք է լինի նորա վստահութիւնը ու Եթիմաճեան միաբանութեան եւ պատգամաւորաց ժողովի վերայ, համոզված լինելով որ սոքա երեքք չեն կամենալ ու Աթոռը ընդհանրական վիճակից իջնել մասնաւորի, այսինքն միայն առեսահայոց աթոռ անել այն:

Այս դէպքում Կ. Պօլսոյ ազգային ժողովին կը մնայ տաճկահայոց կողմանէ մասնակցելու նոր ընտրութեան էլի պատուիրակի միջնորդութեամբ, ինչպէս եղաւ անցեալ անյաջող ընտրութեան ժամանակ: Երբ ակնարկէս յայտնելով որ կ'ընդունէ եւ կը ձանաչէ ընդհանրական կաթողիկոս նրան, ում կ'ընտրէ ու Եթիմաճեան հաւաքված ժողովը պատգամաւորներ ընտրելու պիտի ընտրէ աւելի յարմար կ'երեւի Կ. Պօլսոյ ժողովին, իւր քաղաքական նշանակութիւնը պահպանելու համար տաճկահայ վերաբերութեամբ: Բայց ըստ մեզ առաջին ձանապարհը, այն է ամեն վիճակներից պատգամաւորներ ուղարկելն աւելի արդիւնաւոր է թէ՛ ու Աթոռի եւ թէ՛ ազգի ընտրութեան համար: Եւ այդ պիտի ընտրութիւնը կաթողիկոսի կ'ունենայ լուսն ընդհանրական ազգային ընտրութեան կերպարանք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
5 սեպտեմբերի.

Վերջապէս սպասուած կարգադրութիւնը յայտնուեց. շնորհիւ Պատ-

րիարքի վճռողաբար հրաժարուելով կաթողիկոսութիւնից՝ կայսերական հրամանաւ նոր ընտրողութիւն պէտք է լինի: Ըստ որում այդ հրաժարագիր սուրբ Եթիմաճեան ընտրողական ժողովին յայտնի լինելով փոխանակ չորսի երեք ընտրելիներ է առնանել սկզբնական գործողութեան ժամանակ:

Ահա՛ մեզ դժուարին եւ միակ դէպք մեր եկեղեցական պատմութեան մէջ կաթողիկոսական ընտրութեան վերաբերութեամբ: Ընտրութիւնն եղած, բայց հաստատութիւնը մերժուած: Ահա՛ մեզ անմոռանալի եւ իւր տեսակով նոր օրինակ խրատական դաս, ոչ միայն Հայաստանացւոյ այլ ընդհանուր քրիստոնէական եկեղեցւոյ հօգին ազատ ձանաչելու եւ ոչ բռնաւոր: Եւ յիշուած մէկ եկեղեցւոյ երբ կրօնական հայեացքով ձանաչում է մարդոյն ազատ իւր գործողութեան մէջ: Նորա մեղանշականութիւն եւ առաջնութիւն կամաւոր յօժարութիւնից կախուած եւ ոչ ճակատագրական հարկի տակ դրուած, ինչպէս կարող է բռնանալ ում եւ իցէ կամաց վերայ: Մէկ ազգ՝ երբ իւր պատմական հաւատքներով յառաջ է բերում անուանական ցանկ կաթողիկոսների եւ թագաւորների կամովին ժողովրդապետական կառավար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԵԹԻՄ ԼՈՒՐՑԻ

ԵԹԻՄԱՅԻՆ ՎԵՊԻԿ.

Եթիմը իրանց տան ամենու պոռնուրն էր, նորա հարսի նման չիմնու: Ընտնադրուել էր, ըրիցնաժամի զանգակն ու ծվլուն ձէնը որ չէր լսում, ոտն ու ձեւը դող էր ըլում, լըլըում—թէ եփ պըտի բանից պոռնու, որ վազ տայ ժամը, ժամիցը եր չի ընդի: Մին էլ կը տեսնէր կըլուրիկ արինին հագին, ժըմաղիքը կոնատակին, բոմբոօս փափալը զլլսին, գեղնագործ բարակ շալէ չուխէն հագին, պաճըճին չալ չանչուրբաղով զվրայն դայիմ կապած վաղ ա տալի դրա ժամը քափում ու քրտնքում կորած, որ ինչ ա էս ըրիցու հմբարձին ու խոնարհեցո ու ապրեցոն ասի, հերթը իրան ա ժամը դուրս կը գէր թէ չէ, վաղ կտէր իրանց տան ուլախնուն հետաճելով, ուրիշ աղաք կտրուկ անելով կը տանէր ջուր կը տեր կը բերէր կը կապտէր, կալափէր, տալիքը կը փէշէր ամեն բանից կը պոճէր, հմի նա իրաւունք ունի խաղ անելու— լիկունք մի կտոր պանիր ու հաց կծոտելով կ'երթէր գեղամէջը իս թայդալ տղիւրանց հետ կը խառնուէր:

*) Տես Միջոցը՝ № 68.

— Տղենք, հրէն եթիմն էլ ա գալի, էկէք տպանուկի հաղ անենք, ասաւ Ղօխնանց թաւալարի տակին թոփելած ըրիսէքներից մինը:

— Չէ, տպանուկի չէ, ճճախտի հաղ անենք, նա չիմնուցն էլ լաւ ա, չէ... Եթիմ, դու ինչ ես ասում, ասաւ մէկեւիւր:

— Դուք գիտէք, ինչ կ'ուզէք հաղ արելք, ինձ հմար չիմ միմա:

— Տպանուկի, տպանուկին չիմնուցն լաւ ա, ձէն տվուց մի ուրիշը:

Վերջապէս վճռեցին որ տպանուկի հաղ անեն:

Եթիմը չիմնու մէջը կաղնած իր բռնուցը կցեց, որ տեսնուն ով պէտք է աչքերը կախուէր:

- «Վօպալ, կօպալ,
- «Լիդր ու կօպալ,
- «Քօսան սալակ,
- «Գիլի թալակ,
- «Ախպերն էկաւ
- «Տախտակն ուսին,
- «Նա հուս արաւ:
- «Նա դուս արաւ»:

Վիճակը ընգաւ Ղօխնանց Աբաղին, նա պտի իր աչքերը կալու, չիմն էլ ուրախացած ձէն տուէր՝ «Օհ... Աբաղ, դէ կալ»:

— Չէ, ես խաղում չեմ, ասաւ Աբաղը եղ քաշուկելով:

— Ախտուս որ դու իմամՂուլանց թաքունիցը ես, հէնց դաղալ է, ես, որ կասենաւ Գոծնանցէ ըլում, հմա էլ ինչ կ'ուզէ ըլի Գոծնանցէ մօտիկ ես կենում,

Դ) խաղաբարդ:

էլ նրանց խափաթը կ'ունենաս, ձէն տվուց Սիւրառանց Սիւսոն:

— Դէ էկէք, ուրիշ բան հաղ անենք, ասաւ Եթիմը առանձինը կրճատացնելով Աբաղի վրա, որ հաղնեւուն փողովը արաւ:

— Ի՞նչ հաղ անենք, հարցրուց մի ուրիշը:

— Կ'ուզէք ախուրմալ, կ'ուզէք իծաշարուք, կ'ուզէք կախուլոխի, կ'ուզէք բուրթի, կ'ուզէք կուզոյ-կուզոյ, կ'ուզէք կակարենքի, կ'ուզէք իրեք քարի, կ'ուզէք ջիստափանդի, կ'ուզէք պահուկ-պահուկ, կ'ուզէք ջուրտուքէ, կ'ուզէք ճճախախտի, կ'ուզէք փուր—փուտ, կ'ուզէք բոլոր վանքի, կ'ուզէք հարամուս, կ'ուզէք պուտ-պուտ, կ'ուզէք կուժկուտի, կ'ուզէք էն, որ աղջկեքը էրկու թաքուն են ըլում իրուր ձեռնաբռնուկ անում ու մին միտ ասում:

- «—Ագա—գայ.
- «—Ալլին գազայ.
- «—Տաղուշայ.
- «—Տաղալին դուշայ.
- «—Բանուշայ.
- «—Բանթին դուշայ.
- «—Լաւաշայ.
- «—Լալթին դուշայ.
- «—Բալայ—բալայ.
- «—Բիւր օղան գեալան.
- «—Քիւմ գեալան.
- «—Փլան քեաս գեալան:

— Չէ, չէ, Եթիմ, էս ա մուկն ընդել ա, նոր էլ արծէ օչ. համ էլ էկուց ես գնալ պտիմ մեր սարը, ասաւ Սիւսոն:

— Ո՞ր սարը պտիս ցնալ, հարցրուց Եթիմը փափախը դրսուելով:

— Դժար ուրթը, որ հէրու վեր ինք էկած:

— Վահ. էդ լաւ ա, մենք էլ ենք ընդի, ես էլ պտիմ էկուց գնալ: Եթիմ ընդեւրութիւններու չենք մոռանում: Տես, Սիւսո, ըսօրուանից մինք իրուր խօսք պտենք տալ, որ աղալ—բիւլին գճած:

— Շատ լաւ, ասաւ Սիւսոն:

— Բաս գիտես ինչ ա, Սիւսո, արի ամենքս մեր գլխիցը մի-մի մաղ պոկենք ըլորենք դենք մի քարի տակի, մեղաւնից ով որ մէնակ ուտէ ես մեր ախպերութենին հմիկենց եղը դալաղութիւն աւնի, սուրբ Նշանն ու Սրահանը նրան էն մաղերի նման բարակացնեն:

Երկուսն էլ իրանց գլխներից մի-մի մաղ պոկեցին իրուր հետ ըլորեցին դըրին մի մինձ քարի տակի, յաշատակ ու անէճը իրանց եղբայրութեան:

— Սիւսո, դէ վիկանց, գնանք, սրանցից ով ա լաղաթ առել, որ մենք առնուք, ինչ կ'ուզէ ըլի, էլ թաթուկանց թաքունու կոկքին են կենում, հըլդէլը բանի մէջ քար չի խառնեն, ըլիլ չի, ասաւ Եթիմը, Սիւսոյի ձեռիցը ձեռնաբռնուկ արած ձանփալ ընդան դրա իրանց աները, որ ըռալօտը վաղը սարը գնան, մէկէնուն «քարի քեր» ասելով:

VI
Ամառուայ քեր էր: Լիսնիակը մի գութանաձէկը բացեց:

գաւորը արգելում էր այդ Conocchia հիւանդանոցում թաղաւորին ընդունելն և կառավարիչը, պրոֆեսոր Բոնոմոն և կարգիւնաւարքեպիսկոպոս Սան-Ֆելիչէն, որոնք վայելում են բնակչաց համակրութիւնը, թշուառների վերայ ունեցած մեծ հոգացողութեան համար, թագաւորը այցելեց հիւանդանոցի գրեթէ բոլոր դահլիճներն և իւրաքանչիւր հիւանդին ասում էր քաջալերութեան և միտքարթեան խօսքեր: Կառքը նստելիս նա մի քանի անգամ. «Թշուառներ, որքան նոցա տանջվում են» խօսքերը կրկնեց: Ապա չորս ժամ շարունակ նա այցելեց միւս հիւանդանոցները: Ինչպէս ասում են նա երեք հարիւր հազար Ֆրանկ նուիրել է յօգուտ թշուառների իւր սեպհակամութիւնից: Նէապոլի բանկը նուիրել է 200,000 Ֆրանկ, այս գումարի մի մասը յանձնված է հասարակական խորհրդին, իսկ միւս մասն անյապաղ պիտի բաժանվի քաղաքի աղքատ ընտանիքներին:

«Journal des Debats» և «National» լրագիրները ջոռւմ են տարածված լուրը, թէ զինուորական և ծովային նախարարները, Ֆերրիի կարծեաց հակառակ, ցանկանում են պատգամաւորաց ժողովի հաւաքումն և ջինաստանին պատեւրազմ յայտնելը, ընդհակառակը ներկայումս նախարարաց մէջ կատարեալ համաձայնութիւն է: Ֆերրիի յետաձգել է իւր վերջնական որոշումն ներքին և արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ, մինչև որ տեղի կ'ունենայ երեք կայսրների տեսակցութիւնը, Նա կամենում է իւր նախագիծը համաձայնեցնել երեք կայսրութեանց նախագիծերի հետ և յամենայն զէպս ընդունել նոցա որոշումն ընդդէմ յեղափոխական կուսակցութեան: Այսպէս նա ապահով լինելով բոլոր Եւրոպայի բարոյական օգնութեան մասին և երկրպէս չունենալով որ և է անակնկալ դէպքից, նա կարող կը լինի ուղարկելու ջինաստան և Մադագասկար բաւական զօրք և վերջ տալ գործին, հակառակ Անգլիայի հանդէս բերած դժուարութեանց: Անգլիայի վերաբերութեամբ Ֆերրիի մտադիր է գործելու վճռողաբար, աչքի առաջ ունենալով, որ Անգլիան կարող է Ֆրանսիայի օգնութեան եզրպատկան խնդիրը դրականապէս վճռելու համար, որովհետև հակառակ դէպքում Ֆրանսիան կարող է պաշտպանել Եզրպատկան լուր սեպհական չահերը:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Խոսում ենք հաստատ արգելիքից, որ այսօր, ամսոյ 16-ին սուրբ խաչի վերացման կիրակիէի, կուսանաց եկեղեցում 9 ժամին առաւօտեան, կը լինի պատարագ ի ներկայութեան սրբազան առաջնորդի, Պատարագից յետոյ տեղի կ'ունենայ հանգուցեալ կուսանաց հոգեհանգիստը: Եւ որովհետև այդ օրը լրանում է կուսաստանի Արսէն քահանայ թագաւորունայ և աւագ սարկաւազուհի Հովհաննէի թաղիւնի, Սոփիայ Ամատունայ, Գայիանէ Հախնաղարանի, Անանէ Խօջաբնիկեանի և Զուտիանէ Աբէլեանի ձեռնադրութեան տանձառեակը, լուսի առթիւ բոլոր կուսանք իրենց քահանայի հետ միասին մի հաւանութեամբ պարտաւորում են ամենայն տարի իրենց սեպհական միջոցներէ մի որոշեալ գումար իջնել, որը պիտի մատակարարուի ժողովրդի յետին չքաւոր դասակարգի հիւանդների օգտին և եթէ բարեպաշտ նուիրատուների օգնութեամբ մի յայտնի նշանաւոր գումար կը կազմուի, այն ժամանակ և կ'ընդար-

ձակուի այդ նպատակի դործադրութեան սահմանը, այն է օգնել մանաւանդ չքաւոր և անտէրունչ հիւանդ աշակերտներին և աշակերտուհիներին:

Ամսոյ 14-ին երեկոյեան Աղեքսանդրեան այգիում տեղի ունեցաւ մեծ կօնցերան, որին մասնակցեցան զինուորական երամիշտներ 9 խմբեր, 200 թմբկահարներով: Բազմութիւնը շատ մեծ էր: Այսօր 16-ին ամսոյ երեկոյեան 5 ժամին կը կրկնվի կօնցերանը: Կար և հրախաղութիւն: Կօնցերան էր յօգուտ հին վիրաւորեալ զինուորների:

Հաւաքարի եկեղեցեաց բարեկարգութեան վերաբերելով Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանը գրում է միզ. — Հոգեւոր իշխանութեան կարգադրութեան համաձայն այսօր, ամսոյ 16-ին, կիրակի օրը առաւօտեան ժամի 10-ին ս. պատարագից յետոյ, կուկիլի թանգոյեան ս. Աստուածածնայ եկեղեցում կատարուելու է նոր երեսփոխանի ընտրութիւնը: Յիշեալ ընտրութիւնը կը կատարվի ինքը վերաօտեսը եկեղեցեաց ծխականների և ժամուորների ներկայութեամբ զաղանի քուէարկութեամբ:

Ամսոյ 12-ին թիֆլիս ժամանեց Բաթումից պ. Յօն-Բրուշլիցը, որ նշանակած է գերմանական զեսպան թէյրանում: Նրան ուղևորել են իբրև խորհրդական պրոֆեսոր Բրուշլիցը և իբրև քարտուղար Յոն-Սիլվան: Այս առաջին մշտական գերմանական դեսպանութիւնն է Պարսկաստանում:

«Գրոյեբայի» թղթակիցը շատ մուսլ գոյներով է նկարագրում Սվանետայի այս տարուայ վիճակը: Մի կողմից մուկուն և միւս կողմից ամառային անընդհատ անձրևները, քանիցս եկած ձիւնն և կարկուտը դրկել են բնակիչներին իրանց տարեկան պաշարից: Ենթադրւում էր սպանում է նրանց առաջիկայ ձմեռը:

Խմբագիր Պ. ՍԻՄԵՆՆԵԱՆՑ.
Հրատարակել է ԷՆՖԻԱՃԱՆՑ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Մի հայ երիտասարդ, որ նոր է աւարտել իւր ուսման ընթացքը Ներ. դպրանոցում՝ պատրաստ է աւելնալ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ և ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՔ բոլոր հայոց ուսումնարանների թէ ստորին և թէ վերին դաստանց համար:

Յանկացողներին կ'աւանդէ նաև համառօտ Հոգեբանութիւնը: Մասնակաւարժութիւնը: Բարոյական փիլիսոփայութիւնը և «Մեթոդիկա»:

Հասցէն. Ներ. ուսումնարան — Յարութիւն Մարաղեան: Կամ ուղղափի Մոցնիսեայ ցուլա. Դոմէ Դաւախօւիչէ № 9. Արտյոն Մարաղեան:

ՎԵՑ ՍԵՆԵԿԱՆԻ
Տ Ո Ւ Ն Ստարո-Գիօրեանցից և Նորաշենքից փողոցների անկիւնում:
Հարցնել զաւթումը (2—2)

«Կովկասեան» գրքավաճառանոցի — Զ. Գրիգորեանցի հրատարակութեամբ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի
Յ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
«ՀԱՅՈՑ ԼԵԶ. ՈՒՍՈՒՑԻԶ»
Չ ո Ր Ր Ր Գ տ ա Ր Ո Ւ Ա Յ
Գ Ա Ս Ա Գ Ի Ր Ք Ը.
Ե Ր Կ Ր Ր Զ տպագրութեամբ
(փ ո փ ո լ ո լ թ ի լ Ն Ն Ե Ր Ո Վ)
Գ Ի Ն Ե 60 ԿՈՊԵԿ.
Գումարով գնողներին գնումն կը լինի:

Քաղաքային վարչութիւնը ցանկանում է վ ա Ր ձ Ե Մ Ի Բ Ն Ա ՎԱՐԱՆՈՐ ՈՐ ՈՆՆԻՆԱՐԱՆ Ե Ե-ից մինչև 8 ս ե ն և ա կ, երկու ներքնատուն: Խոհանոց երկու կաթնային վառարանով: Բուսական հնոց, ախոռ և ք ձիւ. մուշտերով: Գաւիթ և փայտոց 750 ուսուրի տարեկան վարձագնով: Այդպիսի բնակարան ունեցողներին խնդրում է զինել քաղաքային վարչութեան զինանատունը ամենայն օր առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը: Բացի կրեակէ և տօն օրերից: (3—2)

Թիֆլիզի բոլոր հայ գրավաճառների մօտ ծախվում է Գ. Տէր Գաբրիէլեանցի ԸՆԿԶ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ գրքագիրքը: Ա. տարի գինն է երեսուն (30) կոպէկ:

(3—2)

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՊՐԱՆՈՅԻ
Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Գ
Դ ա ս ա տ ա ն
ՄԻ ԱՇԱԿԵՐՏ
Ցանկանում է ամեն աւարականների Գ Ա Ս Ն Ե Ր աւանդել տրանսլատ: Հասցէն. Որբեկան երկրորդ փողոց. հեռագրական կայարանին կից՝ Մեքսիկականի տուն. չորրորդ յարկ:

Ներսիսեան դպրանոցի վեցերորդ դաստան ԱՇԱԿԵՐՏ ընդունում է ընտանիքներում հ ա յ ե Ր է Ն ԳԱՍՍԵՐ և պատրաստում է աշակերտներ մինչև երրորդ դաստանը:
Հարցնել զպրանոցում՝ Արչակ Թաղեանեանցին:

Պատիւ ունիմ յայտնելու ամեն տեսակ ՌԻՉԳԵՐԻ Ծախողներին, որ Պետական կառավարութիւնից հաստատուած նոր կանոններին համաձայն ԱՎՅԻՉԻ ՄԱՏԵԱՆՆԵՐԸ և ԲՐԼԱՆԿՆԵՐԸ պատրաստուած են ինձ մօտ այս տարուան համար և կը պատրաստուին միւս տարուանը: Կարող են ստանալ ինձանից: Տպարան կրամարենկո: Մուխրանովի փողոցում: № 13 տունը:

Ա. Մանուշարեանց.

ՇՈՒՏՈՎ ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԳՈՒՐՍ
ԿԸ ԳԱՑ

«Կովկասեան» գրքավաճառանոցի հրատարակութեամբ

Դ ա ս ա գ ի Ր Զ
ԸՆԿԶԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ.
ԱՇԽ. Ա. ՍԻՄԵՆՆԵԱՆՑԻ (4—2)

Մ ա մ ու լ ի տ ա կ ի ջ դ ու ը ս ե կ ա լ
ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ՀԱՅՈՑ
Ի Պ Ե Տ Ս Ն Ո Ր Ա Վ Ա Ր Ժ Ի Ց
(Ամբողջ քերականութիւնն)
Ե Ր Կ ա ս ի Ր Ո Ւ Թ Ի Ն Ե Ն. Գ Ո Ւ Կ Ա Ս Ն Ե Ա Ն Ց.
Գ Ի Ն Ն Ե 50 Կ Ո Պ Ե Կ
Գումարով գնողներին գնումն կը լինի. — Ծախվում է «Կենդանական գրավաճառանոցի»:
2—10

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄԵԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ
ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ

Ս Թ Ե Տ Ի Ր Ե Վ Ա Ն Կ Ո Ւ Ր Ս Ե Ր
Թ Ի Ց Լ Ի Ս Ո Ւ Մ
ԵՐԿՈՒ ՍԵՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
Ե Ր Ր Ր Գ տ ա Ր Ի

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու ս ե լ ի անձանց և պատրաստել զործնական ծանապարհով հմուտ հաշուապահներ: Կուրսերը երկու բաժանմունքից են կազմած. մեծ բաժանմունք՝ մէկ տարուայ և փոքր բաժանմունք՝ երկու տարուայ դասընթացով: Իզական սեռի անձինքներից առանձին բաժանմունք է կազմվում: Աշակերտների պատշաճ յառաջադիմութեան համար, նոյա թիւը իւրաքանչիւր բաժանմունքի մէջ սահմանափակ է:
Աւանդելի աւարկայք սոքա են՝ 1) Առևտրական հն տե ս ու լ թ ի լ Ն Ո Ւ 2) Առևտրական թ ու լ ա Ր ա ն ու լ թ ի լ Ն և վարժութիւնների համընթաց վերայ: 3) Հ ա շ ա լ ա պ ա հ Տ ու լ թ ի լ Ն (պարզ կրկնալի և բանկային): 4) Առևտրական թ ղ թ ա կ յ ու լ թ ի լ Ն 5) Առևտրական և մ ու Ր հ ա կ ի կ ա ն ու ն ա դ Ր ա լ թ ի լ Ն ցանկացողների համար և ս 6) Փ ա ղ ա թ ի լ Ն և զ ու լ 7) Գ Ի զ ա գ Ր Ո Ւ թ ի լ Ն:

Ցանկանալ քաղաքային կուրսերին հետ, որոնց միայն հնարաւոր է կատարվում են գուգրնթացարար գործնական վարժութիւններ: Որպէս զ և աշակերտները կարողանան ձեռք բերել հաշուապահութիւնից լուրջ և գործնական գիտութիւն, մեծ բաժանմունքի մէջ կազմած կը լինի օրինակի գրասենեակ:

Ցանկանալ վարձը (բացի Ֆրանսերէն լեզուի և գերագրութեան դասերից) մեծ բաժանմունքի համար 125 ուսուրի է, իսկ փոքր բաժանմունքի համար 75 ուսուրի: Կիւնթութի աշակերտները ընդունվում են առանձին պայմաններով:

Մեծ բաժանմունք մտնողները պէտք է ներկայացնեն միջնակարգ ուսումնարանի 4-դաստան վկայական. իսկ ովքեր չեն ներկայացնում՝ այդպիսի վկայական նորանք նախապէս քննութեան են թարկվում ուսուցչներից և թուաբանութիւնից: Փոքր բաժանմունքի համար պէտք է գիտնալ՝ գրել և կարգալ ուսուցչներից և թուաբանութեան չորս գործողութիւնները: Գասաւանդութիւնները կատարվում են երեկոյեան ժամերին և առանձին լեզուով. իսկ նոյն առարկաները կ'աւանդուեն և հայերէն և թէ՛ առանալ 6 ցանկացող յայտնելին:

Աւարտող աշակերտները հարցաքննութիւններից յետոյ ստանում են ատեստատներ իրանց ցոյց տուած յառաջադիմութեան համեմատ:

1884-85 տարուայ ուսման ընթացքը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Աշակերտների ընդունութիւնը օգոստոսի 20-ից, ամենայն օր, երեկոյեան 5-ից մինչև 8 ժամը: Մանրամասն տեղեկութիւններ ու կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի ստանալ՝ ձ Ր Ի ա կ է ս եղբարց Ծովանոյեանի բանկային գրասենեակում և կուրսեր հիմնող զե բնակարանում՝ Սոլոյակի և Բախչեվսկի փողոցների անկիւնում: Այլ քանակը Գորդանեանի տանը: № 21: Ուտարաքաղաքացիք զինում են կուրսերի հիմնողին՝ Вѣ Тифлисе. Степану Мануэляну:

Ծանօթութիւն. «Առևտրական կուրսերի» հիմնողը պատիւ ունի ծանօթացնել հասարակութեանը, որ երկու տարուայ միջոցում աւարտել են 21 աշակերտ, որոնցից միայն 5-ը դեռ որոշ պարապմունք ու պաշտօն չ'ունեն. ուստի այն անձերը, որոնք կը կամենան իրենց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ անենալ, թող բարեհաճեն դիմել վերոյիշեալ հասցէով:

4—5

Հ Ա Յ Կ Ա Վ Ա Ն

«ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ»

Սեպտեմբերի վերջին լոյս կը տեսնի Կենդանական գրավաճառանոցի հրատարակութեամբ մեր «ՀԱՅԿԱՎԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ» անունով դասատետը հայոց դպրոցների համար. Ե Ր Կ Ր Ո Ր Գ Տ Ը Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ի, հարստացրած և հիմնական փոփոխութիւններով եկեղեցի:

Մ. ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ.

10—10